



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

06.03.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/21

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն
Բողոքաբեր՝ «Միհրան Արամի Սիմոնյան» Ֆ/Ա

Մասնակցությամբ՝
«Միհրան Արամի Սիմոնյան» Ֆ/Ա-ի ներկայացուցիչներ՝ Հ. Ենգոյանի, Ա.
Պարանյանի,

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանության ներկայացուցիչ՝ Ա. Չերքեզյանի

Գնման մրցույթի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՔԱՐՏ-2020/Ա-33» ծածկագրով հրատապ բաց մրցույթ,
նույնականացման քարտերի տպագրման աշխատանքների ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ
քննող անձ)՝ քննության առնելով «Միհրան Արամի Սիմոնյան» Ֆ/Ա-ի (այսուհետ նաև՝

Մասնակից) կողմից 15.01.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Մասնակիցը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել ՀՀ ոստիկանության կարիքների համար «Նույնականացման քարտերի տպագրման աշխատանքների կատարման» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՔԱՐՏ-2020/Ա-33» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել գնման մրցույթը:

Բողոքներ քննող անձի (Գ. Ներսիսյանի) 15.01.2020թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/08 համարի ծածկագիրը, իսկ 23.01.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 10.02.2020թ.-ի թիվ 33-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2019-2020թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/08 համարի ծածկագրով բողոքի քննությունը 10.02.2020թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

11.02.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/21 համարի ծածկագիրը և 17.02.2020թ.-ին և 28.02.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 28.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.03.2020թ.-ին:

2. «Միհրան Արամի Սիմոնյան» Ֆ/Ա-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Միհրան Արամի Սիմոնյան» Ֆ/Ա-ն 15.01.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ոստիկանության կարիքների համար» «Նույնականացման քարտերի տպագրման աշխատանքների կատարման» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ Ո ՀՐՄԱՇՁԲ-ՔԱՐՏ-2020/Ա-33» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ):

«ՀՀ Ո ՀՐՄԱՇՁԲ-ՔԱՐՏ-2020/Ա-33» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հայտերի բացումը նշանակված է 16.01.2020թ.:

«ՀՀ Ո ՀՐՄԱՇՁԲ-ՔԱՐՏ-2020/Ա-33» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերը հրապարակվել է www.gnumner.am համացանցային կայքում 30.12.2019թ. աշխատանքային ժամի ավարտից հետո, այն է՝ ժամը 19:33-ին:

Համաձայն Մրցույթի հրավերի «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի»՝ գնման առարկայի համար սահմանվել են հետևյալ տեխնիկական պարամետրերը /ներկայացվում է հատված/.

- ISO/IEC 7810 ID Card: Ֆիզիկական առանձնահատկություններ,
- ISO/IEC 7812 ID Card: Ներկառուցված պլաստայով կոնտակտային քարտ,
- ISO 10373-3 մեխանիկական թեստեր: ճկում,
- ISO 10373-3 մեխանիկական թեստեր: ոլորում,
- ISO 10373-3 մեխանիկական թեստեր: խտացում,
- ISO 10373-1 կլիմայական թեստեր: ջերմաստիճան,
- ISO 10373-1 կլիմայական թեստեր: խոնավություն,
- ISO 7816-3 կլիմայական թեստեր: էլեկտրական ազդանշաններ և փոխանցման պրոտոկոլներ,
- ISO 10373-3 էլեկտրական թեստեր: ստատիկ էլեկտրաէներգիա,
- DIN EN ISO 4892-2, B այլ թեստեր: ուլտրամանուշակագույն լույս,
- ISO 9001-2001 ISO 9001 Certification for the manufacturing site of the bidder
- ISO/IEC 7816-1 Ֆիզիկական առանձնահատկություններ,
- ISO/IEC 7816 -2 Կոնտակտների ուղղություններ և գտնվելու վայր,
- ISO/IEC 7816-3 էլեկտրական ինտերֆեյս և փոխանցման պրոտոկոլներ,
- ISO/IEC 7816-4 Միջոլորտային հրահանգներ՝ փոխադարձ փոխանակման համար,
- ISO/IEC 7816-5 Համարակալման համակարգ և գրանցման մրցույթ առաջարկ ներկայացնողների համար,

➤ ISO/IEC 7816-6 Միջուրրային փոխանակման փոխանակման համար,

➤ ISO/IEC 7811 Նույնականացման քարտերի գրառման տեխնիկայի նկարագրություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է փոխառված գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական փոխանակման, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Գտնում ենք, որ «ՀՀ Ո ՀՐԱՇՁՐ-ՔԱՐՏ-2020/Ա-33» ծածկագրով հրատարակված մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից հրավերը կազմելիս՝ թույլ է տրվել Օրենքի վերոշարադրված պահանջների խախտում:

Նախ պետք է նշել հետևյալը, սույն բողոքով վիճարկվող մրցույթի հրավերը հրատարակվել է www.gnumner.am համացանցային կայքում 30.12.2019թ. աշխատանքային ժամի ավարտից հետո՝ ժամը 19:33-ին: Այսինքն ասել, թե մրցույթի հրավերը հրատարակվել է 2019թ.' չի համապատասխանի իրականությանը, քանի որ ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ՝ ՀՀ պետական բոլոր կառույցները տեղեկացված էին տոնական օրերի հետ պայմանավորված ոչ աշխատանքային օրերի հետ կապված, ըստ որի 31.12.2019թ.-07.01.2020թ. ներառյալ հայտարարված էր ոչ աշխատանքային օրեր և հետևաբար 30.12.2019թ. ժամը 19:33 չի կարող համարվել աշխատանքային ժամ և այս դեպքում ստացվում է, որ ՀՀ ոստիկանությունը կարծես թե միտումնավոր հրավերը հրատարակել է աշխատանքային ժամի ավարտից հետո, որպիսի պարագայում <<իբր թե>> կստացվի, որ հրավերը հրատարակված է եղել դեռևս 30.12.2019թ., մինչդեռ մասնակցության հայտ ներկայացնել ցանկացող աշխատող ընկերությունները փաստացի կտեսնեին հրավերը միայն 08.01.2020թ., քանի որ փաստացի 2019թ. վերջին աշխատանքային օրվա աշխատանքային ժամի ավարտը հրավերը չի եղել հրատարակված կայքում և հետևաբար հայտեր ներկայացնելու համար նախատեսված 17 օրերից 9 օրը՝ ընկերության կարծիքով միտումնավոր հօդս են ցնդում:

Միգուցե բողոքներ քննող անձի մոտ հարց առաջանա՝ ինչ դեր է խաղում այդ 9 օրը հայտ ներկայացնելու համար, չէ որ դեռևս հայտ ներկայացնելու համար կա բավականին ժամանակ մոտ՝ 8 օր: Այս պարագայում հայտնում ենք հետևյալը՝ քանի որ հրավերով նախատեսված գնման առարկայից՝ պահանջվում է պատրաստել թվով 191.000 օրինակ, հետևաբար անհրաժեշտություն կա կապեր հաստատել արտասահմանյան գործընկերների հետ, գնահատել աշխատանքային ռեսուրսները, գնահատել ռիսկերը, բանակցել գործընկերների հետ գնման առարկայի գների նվազեցման շուրջ և այլն, իսկ նման պարագայում՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ հրավերի տեխնիկական բնութագրում առկա են բազմաթիվ մրցակցային անհավասար պայմաններ պարունակող կետեր, որը թույլ է տալիս ենթադրելու, որ կա նախընտրելի մատակարար՝ ուստի վերը նշված մատակարարը տեղյակ լինելով 30.12.2019թ. աշխատանքային ժամի ավարտից

հետո հրապարակված հրավերին՝ ի տարբերություն մյուս հայտ ներկայացնել ցանակացող մասնակիցների համեմատ ստանում է առավելություն:

Բողոքաբերի կարծիքով, հրավերի տեխնիկական բնութագիրը մրցակցության հավասար պայմաններ չի ապահովում հնարավոր մասնակիցների համար, առաջացնում է չհիմնավորված խոչընդոտներ:

Տեխնիկական նկարագրի 7-րդ կետի համաձայն՝ նույնականացման քարտը պետք է համատեղելի լինի ըստ հետևյալ ստադարնների կամ թեստերի.

- ISO/IEC 7810 ID Card: Ֆիզիկական առանձնահատկություններ,
- ISO/IEC 7812 ID Card: Ներկառուցված պլաստայով կոնտակտային քարտ,
- ISO 10373-3 մեխանիկական թեստեր: ճկում,
- ISO 10373-3 մեխանիկական թեստեր: ոլորում,
- ISO 10373-3 մեխանիկական թեստեր: խտացում,
- ISO 10373-1 կլիմայական թեստեր: ջերմաստիճան,
- ISO 10373-1 կլիմայական թեստեր: խոնավություն,
- ISO 7816-3 կլիմայական թեստեր: էլեկտրական ազդանշաններ և փոխանցման պրոտոկոլներ,
- ISO 10373-3 էլեկտրական թեստեր: ստատիկ էլեկտրաէներգիա,
- DIN EN ISO 4892-2, B այլ թեստեր: ուլտրամանուշակագույն լույս,
- ISO 9001-2001 ISO 9001 Certification for the manufacturing site of the bidder
- ISO/IEC 7816-1 Ֆիզիկական առանձնահատկություններ,
- ISO/IEC 7816 -2 Կոնտակտների ուղղություններ և գտնվելու վայր,
- ISO/IEC 7816-3 էլեկտրական ինտերֆեյս և փոխանցման պրոտոկոլներ,
- ISO/IEC 7816-4 Միջոլորտային հրահանգներ՝ փոխադարձ փոխանակման համար,
- ISO/IEC 7816-5 Համարակալման համակարգ և գրանցման մրցույթ առաջարկ ներկայացնողների համար,
- ISO/IEC 7816-6 Միջոլորտային տվյալների տարրեր՝ փոխադարձ փոխանակման համար,
- ISO/IEC 7811 Նույնականացման քարտերի գրառման տեխնիկայի նկարագրություն:

«Ճ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին հայտնում ենք, որ այս կետով սահմանված պահանջը կարող է կատարվել միայն գործող մատակարարի կողմից, քանի որ բոլոր թեստերի իրականացման և ստուգման համար՝ անհրաժեշտ է ունենալ պատրաստի քարտ՝ ըստ հաճախորդի ձևավորման և առանձնահատկությունների: Անհնար է բոլոր թեստերի արդյունքների և թեստերի փոխադրումը մի քարտի վրա, որը դեռ չի արտադրվել: Սովորաբար, այս պահանջը հաճախորդին դրվում է ապրանքների առաջին խմբաքանակի պատրաստման ընթացքում:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախատրակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» պարբերության համաձայն՝ «Ճ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման մրցույթը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:»:

Ներկայացված լրացումներով, Մասնակիցը հայտնել է նաև հետևյալը.

«Սույն բողոքի քննությանը նվիրված 23.01.2020թ. նիստի ընթացքում Մ.Սիմոնյանի ներկայացուցիչները ներկայացրեցին «Ճ ոստիկանության կարիքների համար՝ «Նույնակա-նացման քարտերի տպագրման աշխատանքների կատարման» ձեռքբերման նպատակով հայտարարված «Ճ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՔԱՐՏ-2020/Ա-33» ծածկագրով հրատապ բաց մրցույթի (այսուհետ նաև՝ Մրցույթ) հրավերում առկա բացթողումները և թերությունները, որոնք, ըստ բողոքաբերի՝ խախտում են «Գնումների մասին» «Ճ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի և 13-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

Ստորև ներկայացվում է նշված նկատառումները.

1. Ինչպես նշել էին ներկայացված բողոքով, «Ճ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՔԱՐՏ-2020/Ա-33» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հայտերի բացումը նշանակված էր 16.01.2020թ.:

Մինչդեռ, «ՀՀ Ո ՀՐՄԱՇՁԲ-ՔԱՐՏ-2020/Ա-33» ծածկագրով հրատարակված բաց մրցույթի հրավերը հրապարակվել է www.gnumner.am համացանցային կայքում 30.12.2019թ. աշխատանքային ժամի ավարտից հետո, այն է՝ ժամը 19:33-ին:

Նախ պետք է նշել, որ սույն բողոքով վիճարկվող մրցույթի հրավերը հրապարակվել է www.gnumner.am համացանցային կայքում 30.12.2019թ. աշխատանքային ժամի ավարտից հետո՝ ժամը 19:33-ին: Այսինքն ասել, թե մրցույթի հրավերը հրապարակվել է 2019թ.՝ չի համապատասխանի իրականությանը, քանի որ ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ՝ ՀՀ պետական բոլոր կառույցները տեղեկացված էին տոնական օրերի հետ պայմանավորված ոչ աշխատանքային օրերի հետ կապված, ըստ որի 31.12.2019թ.-07.01.2020թ. ներառյալ հայտարարված էր ոչ աշխատանքային օրեր և հետևաբար 30.12.2019թ. ժամը 19:33 չի կարող համարվել աշխատանքային ժամ և այս դեպքում ստացվում է, որ ՀՀ ոստիկանությունը կարծես թե միտումնավոր հրավերը հրապարակել է աշխատանքային ժամի ավարտից հետո, որպեսզի «<իբր թե>> կստացվի, որ հրավերը հրապարակված է եղել դեռևս 30.12.2019թ., մինչդեռ մասնակցության հայտ ներկայացնել ցանկացող աշխատող ընկերությունները փաստացի կտեսնեին հրավերը միայն 08.01.2020թ., քանի որ փաստացի 2019թ. վերջին աշխատանքային օրվա աշխատանքային ժամի ավարտը հրավերը չի եղել հրապարակված կայքում և հետևաբար հայտեր ներկայացնելու համար նախատեսված 17 օրերից 9 օրը՝ ընկերության կարծիքով միտումնավոր հօդս են ցնդում:

Միգուցե բողոքներ քննող անձի մոտ հարց առաջանա՝ ինչ դեր է խաղում այդ 9 օրը հայտ ներկայացնելու համար, չէ որ դեռևս հայտ ներկայացնելու համար կա բավականին ժամանակ մոտ՝ 8 օր: Այս պարագայում հայտնում ենք հետևյալը. քանի որ հրավերով նախատեսված գնման առարկայից պահանջվում է պատրաստել թվով 191.000 օրինակ, հետևաբար անհրաժեշտություն կար կապեր հաստատել արտասահմանյան գործընկերների հետ, գնահատել աշխատանքային ռեսուրսները, գնահատել ռիսկերը, բանակցել գործընկերների հետ գնման առարկայի գների նվազեցման շուրջ և այլն, իսկ նման պարագայում՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ հրավերի տեխնիկական բնութագրում առկա են բազմաթիվ մրցակցային անհավասար պայմաններ պարունակող կետեր, որը թույլ է տալիս ենթադրելու, որ կա նախընտրելի մատակարար՝ ուստի վերը նշված մատակարարը տեղյակ լինելով 30.12.2019թ. աշխատանքային ժամի ավարտից

հետո հրապարակված հրավերին՝ ի տարբերություն մյուս հայտ ներկայացնել ցանակացող մասնակիցների համեմատ ստանում է առավելություն:

Բացի այդ, բողոքի քննությանը նվիրված նիստի ժամանակ բողոքաբերի ներկայացուցիչների կողմից բարձրացվեցին բազմաթիվ խնդիրներ՝ կապված տեխնիկական բնութագրի հետ, որոնք ճշգրտման, ստուգման, փորձարկման և հստակեցման կարիք ունեին, սակայն ոչ աշխատանքային օրեր լինելու պայմաններում հնարավոր մասնակիցները, փաստացիորեն, զրկվեցին մասնակցության իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունից:

2. Ինչպես երևում է հրավերի բովանդակությունից, նույնականացման քարտերը պետք է համապատասխանեն ISO պահանջներին՝ հաստատված ICAO ստանդարտներով: Հրավիրված նիստի ժամանակ ՀՀ ոստիկանությունը հաստատեց, որ հրավերի տեխնիկական բնութագիրը հաստատվել է՝ համապատասխան 2010թ. հաստատված ICAO ստանդարտների և լիովին համապատասխանում է 2010թ. հաստատված ICAO ստանդարտներին: Մինչդեռ հայտնի է, որ ICAO ստանդարտները վերանայվել են և 2015թ. հաստատվել են միանգամայն ICAO այլ ստանդարտներ, որի համապատասխան ապացույցը ներկայացվեց բողոքը քննող անձին նույն նիստի ժամանակ: Սրա հետ կապված ՀՀ ոստիկանությունը չժխտելով, որ իրոք, 2015թ. հաստատվել են ICAO այլ ստանդարտներ, հայտնեց, որ Մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրերը կազմվել է 2010թ. հաստատված ICAO ստանդարտներին համապատասխան, քանի որ ՀՀ-ում առկա սարքերը կարող են կարդալ բացառապես 2010թ. հաստատված ICAO ստանդարտներին համապատասխան ստեղծված նույնականացման քարտերը: Գտնում ենք, որ նշված պնդումը չի համապատասխանում իրականությանը, դրան ի հավաստումը ՀՀ ոստիկանության կողմից չներկայացվեց որևէ ապացույց, իսկ ՀՀ-ում կիրառվող սարքերը (reader) կարող են ընթերցել թե՛ 2010թ., և թե՛ 2015թ. համապատասխան ստանդարտներով արտադրված նույնականացման քարտեր:

3. Հրավերի տեխնիկական բնութագրի 7-րդ կետը սահմանվել է, որ նույնականացման քարտը պետք է համատեղելի լինեն ըստ թվարկված ստանդարտների կամ թեստերի: Ստորև թվարկվել են այն պարտադիր թեստերը, որոնք պետք է անցնեն նույնականացման քարտերը: Այս հատվածում առկա են հետևյալ խնդիրները.

- Նախ, թեստերը պետք է թվարկված լինեն ոչ թե պայմանական հերթականությամբ, այլ թվագրվեն այնպես, որ պարզ լինի, թե որ թեստին ինչ հերթականությամբ պետք է հետևի որ թեստը:

- Անհրաժեշտ է, որ հրավերով հստակ սահմանվի, որ Հրավերի տեխնիկական բնութագրի 7-րդ կետում նշված նույնականացման քարտերի թեստավորումը պետք է պարտադիր իրականացվի անկախ փորձագիտական կենտրոնի /լաբորատորիա/ կողմից, որի կողմից էլ կորամադրվի համապատասխան փորձագիտական եզրակացություն՝ համապատասխան թեստերը անցնելու վերավերյալ: Հակառակ դեպքում թեստավորումը կարող է անցկացնել հենց նույնականացման քարտեր արտադրող ընկերությունը, և այդ պարագայում հնարավոր չէ երաշխավորել փորձաքնության արդյունքների օբյեկտիվությունը՝ արտադրող ընկերության արդադրաքի որակը պատշաճ ներկայացնելու շահագրգռվածության պայմաններում:

4. Հրավերի տեխնիկական բնութագրի 15-ր կետում նշված է, որ մատակարարման ենթակա նույնականացման քարտերն իրենց տեխնիկական հատկանիշներով, արտաքին տեսքով, էլեկտրոնային կրիչի (չիպի) հնարավորություններով պետք է համընկնեն ներկայումս Հայաստանի Հանրապետության տարածքում տպագրվող և օգտագործվող նույնականացման քարտերին: Վկայակոչված ICAO ստանդարտներով պահանջվում է, որ նույնականացման քարտերը պարտադիր ունենան հոլոգրամա /համարվում է կեղծիքից պաշտպանելու ամենակարևոր պայմանը/ և սահմանվում են հոլոգրամայի քարտի վրա գտնվելու հատվածը: Ներկայումս ՀՀ-ում կիրառվող նույնականացման քարտերը նույնպես ունեն այդ հոլոգրաման: Վերոհիշյալից պարզ է դառնում, որ Մրցույթով պահանջված նույնականացման քարտերի վրա նույնպես պետք է տեղադրվի հոլոգրամա: Սակայն հրավերի տեխնիկական բնութագրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այստեղ ընդհանրապես բացակայում է որևէ տեղեկատվություն հոլոգրամայի վերաբերյալ: Նշված բացթողումը առաջացնում է մի շարք խնդիրներ. նախ, պետք է հստակ տրվի հոլոգրամայի նկարագիրը և նշվի, թե նախորդ նունականացման քարտերի վրա առկա հոլոգրամայի նկարմամբ հեղինակային իրավունքը ում է պատկանում: Եթե նշված հոլոգրամայի նկարմամբ հեղինակային իրավունքը պատկանում է նախորդ մրցույթը հաղթած ընկերությանը, ով արտադրել է ներկայումս ՀՀ-ում օգտագործվող նույնականացման քարտերը, ապա այդ մասին հրավերը պետք է պարունակի պարտադիր նշում, որպեսզի այդ մրցույթին հայտ ներկայացնող ընկերությունը կարողանա նախորոք պարզել այլ

ընկերությունից այդ հեղինակային իրավունքի գնելու հնարավորության փաստը և արժեքը: Եթե հոլոգրամայի նկատմամբ հեղինակային իրավունքը պատկանում է ՀՀ-ին, ապա հրավերը պետք է պարունակի հստակ տեղեկատվություն, թե նշված հոլոգրաման կտրամադրվի կատարողին՝ պատվիրատուի կողմից՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո կոնկրետ ժամկետում: Երկրորդ դեպքում հնարավոր մասնակիցը իր ներկայացվող գնի մեջ արդեն չի հաշվարի ծախսեր՝ կապված հոլոգրամայի ձեռքբերման հետ, և միաժամանակ առկա կլինի երաշխիք, որ պատվիրատուն Հրավերով սահմանված ժամկետում հոլոգրաման կտրամադրի կատարողին:

5. Հրավերի տեխնիկական բնութագրի նույն 15-ր կետում նշված է, որ նույնականացման քարտի տպագրությունը՝ պետք է իրականացվի Bauer սարքի միջոցով: Այստեղ խնդիրը կայանում է նրանում, որ Մրցույթի հրավերում նշված չեն Bauer սարքի (հանդիսանում է լազերային տպագրական մեքենա) ոչ մի պարամետր, հատկանիշ, օրինակ հզորությունը, լազերի լայնություն, խորություն և այլն, ինչը այս մասով հրավերի տեխնիկական բնութագիրը դարձնում է ոչ հստակ և ոչ ամբողջական: Այլ կերպ ասած, այս կետում չի նշվում Bauer սարքի գործառնական տեխնիկական պարամետրերը, ինչը իր հերթին սահմանափակում է նույնականացման քարտերի հնարավոր մատակարարներին՝ լիովին բավարարելու գնումների գործընթացի պահանջները /անորոշ է/: Հասկանալի է, որ անհատականացման քարտերի լազերային տպագրության/այրման ժամանակ կարող են առաջանալ այսպես կոչված արտացոլման հետևանքներ, որոնք շեղումներ կտան վերջնական փաստաթղթի հետ, օրինակ, բնօրինակ ստանդարտի որակի անհամապատասխանությունը, որն իր հերթին ընդունելի չի լինի կարգավորող մարմինների համար: Քանի որ մրցույթի փուլում նյութերի և արտադրանքի փորձարկման հնարավորությունը չի ապահովվում, սա ենթադրում է ապագա մատակարարում նախնական որոշակիություն (այս գործոնը խախտում է մրցույթի բոլոր մասնակիցների համարժեքության իրավունքը): Իսկ վերոհիշյալը կարող է ապահովվել բացառապես Bauer սարքի տեխնիկական բոլոր անհրաժեշտ պարամետրերը հրավերում հստակ ամրագրելու եղանակով:

6. Հրավերի տեխնիկական բնութագրի նույն 17-ր կետում նշված է, որ նույնականացման քարտի բլանկների հետ միասին կապալառու կազմակերպությունը պետք է տրամադրի նաև 200000 հապ Փին և Փուկ կողերի տպագրման հատուկ ծրարներ՝ ներկայումս տրամադրվող կողերին համապատասխան: Գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ այստեղ բացակայում է որևէ տեղեկատվություն, թե նշված ծրարները ինչպիսինը պետք է լինեն՝ ինչ չափի, ինչ հաստատության, ինչ գույնի, ինչ որակի, ինչ փակման եղանակի: Բացի այդ, տեղեկատվություն չկա, թե ծրարում Փին և Փուկ կոդերը ինչ թղթի վրա պետք է տպագրվի և քանի թուղթ պետք է դրվի ծրարի մեջ (օրինակ, ծրարի մեջ պետք է դրվի որևէ նկարագիր՝ инструкция, թե՛ ոչ):

7. Հրավերի տեխնիկական բնութագրի՝ «Նույնականացման քարտի էլեկտրոնային կրիչին (չիպին) ներկայացվող պահանջներ» բաժնիում նշված է.

1.1 Սարքային ապահովում. SmartMX (P5CC080) մանրամշակիչը նախատեսված է էլեկտրոնային Կառավարության լայնածավալ ծրագրեր սպասարկելու համար: Չիպի նկարագրություն. 80 kB EEPROM: 1.3. Օպերացիոն համակարգ. JCOP2.4.1 R3 օպերացիոն համակարգ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ հետևյալը.

- SmartMX (P5CC080) - այս պրոցեսորի արտադրությունը այսօր դադարեցված է /դուրս է եկել արտադրությունից/ և ի վիճակի չէ ապահովել երկարակեցություն: Այս պահին օգտագործվում են հաջորդ սերնդի չիպերը (P60 և P 71):

- 80 kB EEPROM – այն հնացած է, այժմ օգտագործվում են EEPROM or Flash.
- JCOP2.4.1 R3 – հանդիսանում է հնացած համակարգ և այլևս չի օգտագործվում:

Նշված տեխնիկական խնդիրը քննելիս՝ խնդրում ենք նկատի ունենալ երկու կարևոր հանգամանք՝ նախ, արտադրությունից հանված, հնացած ապրանք գնելու դեպքում պետության գնումը չի կարող համարվել արդյունավետ և օգտավետ, և երկրորդը, արտադրությունից հանված ապրանքի ձեռքբերման համար ընկերությունը հատուկ պատվեր պետք է կատարի, որպեսզի արտադրողը հատուկ թողարկի արդեն իսկ արտադրությունից հանված արտադրանքը, ինչի պայմաններում նման ապրանքի գինը կլինի շատ ավելի բարձր, քան ներկայումս օգտագործվող ժամանակակից տեխնիկական և չիպերը: Նման իրավիճակից կարող է օգտվել և ավելի էժան գին առաջարկել բացառապես նույնականացման քարտեր արտադրած նախորդ ընկերությունը, որի տիրապետության տակ արդեն իսկ գտնվում են ժամանակին ձեռքբերված հնացած տեխնիկական միջոցները /չիպերը/: Վերոհիշյալը ապացուցվում է նաև վիճարկվող մրցույթին հայտ ներկայացրած մասնակիցների ներկայացրած գնային առաջարկներով. նախորդ մրցույթին հաղթած

մասնակիցը՝ «<Լեհական արժեթղթերի արտադրամաս» Բ.Ը.-ն առաջարկել է 291 984 000 ՀՀ դրամ, մինչդեռ մյուս երկու մասնակիցները՝ համապատասխանաբար՝ 378 180 000 ՀՀ դրամ և 538 620 000 ՀՀ դրամ գումար: Այսինքն գների փարբերությունը կազմում է համապատասխանաբար՝ 100 և 200 մլն. ՀՀ դրամ:

Հարգելի՛ պարոն Ներսիսիյան, խնդրում ենք նկատի ունենալ, որ մի շարք տեխնիկական պարամետրերի մասով, որոնք հնացած են, դուրս են եկել արտադրությունից, սակայն պահանջվել վիճարկվող մրցույթի հրավերով, ՀՀ ոստիկանությունը հիմնավորեց, որ ժամանակակից պահանջներ չեն ներկայացվել, քանի որ հակառակ դեպքում նոր տեխնոլոգիաներին համապատասխանող նույնականացման քարտերը ընթեռնելի չեն լինի ՀՀ-ում առկա սարքերի (reader) միջոցով: Գտնում ենք, որ նշված պնդումը չի համապատասխանում իրականությանը, դրան ի հավաստումը ՀՀ ոստիկանության կողմից չներկայացվեց որևէ ապացույց, իսկ մեր ունեցած տեղեկությունների համաձայն՝ ՀՀ-ում կիրառվող սարքերը (reader) կարող են ընթերցել նաև ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած 2015թ. համապատասխան ստանդարտներով արտադրված նույնականացման քարտերը:

Այս հարցի հետ կապված չափազանց կարևոր ենք համարում պահանջել ՀՀ ոստիկանությունից համապատասխան գրավոր, հիմնավոր ապացույց ներկայացնելը, որ բացառապես SmartMX (P5CC080), 80 kB EEPROM և JCOP2.4.1 R3 պահանջներին համապատասխանող նույնականացման քարտերը կարող են համատեղելի լինել ՀՀ-ում առկա սարքերի հետ:

Գտնում ենք, որ նշված հարցի հետ կապված հստակ և հավաստի տեղեկատվություն ստանալու համար նպատակարարամար կլինի, որպեսզի սույն բողոքի քննության շրջանակներում Ձեր կողմից կատարվի համապատասխան պաշտոնական հարցում իրավասու մարմնին (օրինակ ԵԿԵՆԳ-ին), պարզելու առկա սարքերի կողմից քարտերը ընթերցելու հնարավորության վերաբերյալ:

Հակառակ դեպքում կստեղծվի մի իրավիճակ, երբ բացառապես ՀՀ ոստիկանության բանավոր հայտարարությունը բավարար կլինի ՀՀ պետական բյուջեից մոտ 340 000 000 ՀՀ դրամ գումարը ոչ ուսցիոնալ և ոչ օգտավետ օգտագործման համար՝ գնելու նույնականացման քարտեր, որոնք այլև չեն համապատասխանում ներկայումս աշխարհում ընդունված 2015թ. ICAO ստանդարտներին:»:

«Ինչպես արդեն նշել ենք, բողոքի վերաբերյալ ներկայացված թիվ 1 լրացմամբ, վերոհիշյալ բողոքի քննությանը նվիրված 23.01.2020թ. նիստի ընթացքում ՀՀ

նստիկանությունը չժխտելով, որ Հրավերի տեխնիկական բնութագիրը կազմվել է 2010թ. հաստատված ICAO ստանդարտներին համապատասխան /չնայած ներկայումս գործում են 2015թ. հաստատված ICAO ստանդարտները/, քանի որ, ըստ ՀՀ նստիկանության, ՀՀ-ում առկա սարքերը կարող են ընթերցել/կարդալ բացառապես 2010թ. հաստատված ICAO ստանդարտներին համապատասխան ստեղծված նույնականացման քարտերը:

Նույն նիստի ժամանակ բողոքաբերի ներկայացուցիչների կողմից հայտնվեցին դիտողություններ հրավերի տեխնիկական բնութագրով պահանջված չիպերի նկատմամբ: Մասնավորապես, հայտնվեց հետևյալը.

- SmartMX (P5CC080) - այս պրոցեսորի արտադրությունը այսօր դադարեցված է /դուրս է եկել արտադրությունից/ և ի վիճակի չէ ապահովել երկարակեցություն: Այս պահին օգտագործվում են հաջորդ սերնդի չիպերը (P60 և P 71):

- 80 kB EEPROM – այն հնացած է, այժմ օգտագործվում են EEPROM or Flash.
- JCOP2.4.1 R3 – հանդիսանում է հնացած համակարգ և այլևս չի օգտագործվում:

Այս դիտողությունների հետ կապված ՀՀ նստիկանությունը հայտնեց, որ այս պարամետրերի նկատմամբ ժամանակակից պահանջներ չեն ներկայացվել, քանի որ հակառակ դեպքում նոր տեխնոլոգիաներին համապատասխանող նույնականացման քարտերը ընթերցելի չեն լինի ՀՀ-ում առկա սարքերի (reader) միջոցով:

Հայտնում ենք, որ ՀՀ-ում կիրառվող սարքերը (reader) կարող են ընթերցել նաև ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած 2015թ. համապատասխան ստանդարտներով արտադրված նույնականացման քարտերը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ-ում նույնականացման քարտերի ընթերցման համար օգտագործվում են հետևյալ սարքերը (reader)' Amaxtek's C290 USB Smart Card Reader: Այդ տեղեկությունը հնարավոր է ստանալ EKENG պաշտոնական կայքից հետևյալ հղմամբ'
[https://www.ekeng.am/hy/sub/card_reader:](https://www.ekeng.am/hy/sub/card_reader)

ՀՀ-ում գործով նշված սարքը համապատասխանում է ISO 7816 ստանդարտին:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին տեղեկացնում ենք, որ ՀՀ-ում օգտագործվող Amaxtek's C290 USB Smart Card Reader սարքը կարող է ընթերցել ժամանակակից աշխարհում կիրառվող և լայն տարածում ունեցող ցանկացած չիպեր, ինչի մասին մենք սույն գրության վերևում արդեն իսկ նշել ենք: Հրավերով ընդամենը անհրաժեշտ է, որպեսզի չիպի նկատմամբ սահմանվեն ընդհանրական բնույթի հետևյալ երկու պահանջը.

- *контактный интерфейс ISO/IEC 7816,*
- *SO/ IEC 7816 UART поддерживающий стандартные протоколы T = 0 и T = 1:*

Հայտնում ենք, որ ներկայումս աշխարհում արտադրվող բոլոր չիպերը համապատասխանում են վերոթվարկված երկու պահանջներին:

Վերոհիշյալի արդյունքում ՀՀ-ն ստիպված չի լինի գնել արտադրությունից հանված, հնացած չիպեր, ինչի արդյունքում պետություն գնումը կլինի արդյունավետ և օգտավետ, և երկրորդը, արտադրությունից հանված ապրանքի ձեռքբերման համար ընկերությունը հատուկ պատվեր չի կատարի, որպեսզի արտադրողը հատուկ թողարկի արդեն իսկ արտադրությունից հանված չիպեր, ինչի պայմաններում նման ապրանքի գինը կլինի շատ ավելի բարձր, քան ներկայումս օգտագործվող ժամանակակից տեխնիկան և չիպերը:

Հարգելի պարոն Ներսիսյան, հայտնում ենք, որ վերոհիշյալ տեղեկատվությունը կարող է հաստատվել նաև էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակի՝ ԷԿԵՆԳ-ի կողմից:»:

Վերոգրյալով պայմանավորված, «Միհրան Արամի Սիմոնյան» Ֆ/Ա-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել ՀՀ ոստիկանության կարիքների համար «Նույնականացման քարտերի տպագրման աշխատանքների կատարման» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՔԱՐՏ-2020/Ա-33» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել գնման մրցույթը:

3. ՀՀ ոստիկանության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 15.01.2020թ.-ին գրությամբ դիմել է ՀՀ ոստիկանությանը՝ հնարավորություն տալով «Միհրան Արամի Սիմոնյան» Ֆ/Ա-ի կողմից 15.01.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով հրավիրված նիստերին, ներկայացրել է գրավոր դիրքորոշում և հայտնել հետևյալը.

«ՀՀ-ում իրականացվում է կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի թողարկման, արդիականացված հանրային հավաստագրերի ենթակառուցվածքի ավտոմատացված համակարգի ներդրման, սպասարկման և փոխանցման մրցույթ և այդ

կապակցությամբ մշակվել է նոր տեխնիկական առաջադրանք ժամանակակից մոտեցումներով: Այդ մրցույթով նախատեսված է վերազինվել նոր ծրագրային ապահովմամբ և ժամանակակից տեխնիկական միջոցներով:

Մինչև հիմնական մրցույթի ավարտը, նույնականացման քարտերի բլանկների պակասը լրացնելու նպատակով, հայտարարվել է հրատապ մրցույթ և նախատեսվել է պատվիրել ներկայումս գործող, ՀՀ կառավարության 26.08.2010թ. թիվ 33 արձանագրային որոշմամբ հաստատված, նույնականացման քարտերին նմանատիպ քարտերի խմբաքանակ:

ՀՀ-ում առկա և գործարկվող նույնականացման քարտերը և ծրագրային ապահովումը փորձարկված են եղել բացառապես ՀՀ կառավարության 26.08.2010թ. թիվ 33 արձանագրային որոշմամբ հաստատված տեխնիկական բնութագրում նշված պահանջներով: Նման մոտեցմամբ անհրաժեշտություն չի առաջանա նոր տեխնիկական միջոցների և ծրագրային ապահովումների ձեռքբերումը, ինչը նախատեսված է կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի թողարկման, արդիականացված հանրային հավաստագրերի ենթակառուցվածքի ավտոմատացված համակարգի ներդրման, սպասարկման և փոխանցման մրցույթով:

Մրցույթի մասնակից կազմակերպությունները հնարավորություն են ունեցել պահանջելու նույնականացման քարտերի և փին ու փուկ կոդերի տպագրման համար նախատեսված ծրարների նմուշ-օրինակներ:

ՀՀ կառավարության 26.08.2010թ. թիվ 33 արձանագրային որոշմամբ հաստատված նույնականացման քարտեր ձեռք բերելու դեպքում (ունենալով նաև նույնականացման քարտերի նմուշ-օրինակներ) Bauer տպագրող սարքի տեխնիկական պարամետրերի անհրաժեշտություն առաջանալ չէր կարող: Կարդացող սարքերը կկարողանան ընթերցել նույնականացման քարտերը առանց ծրագրային ապահովման փոփոխության, եթե դրանք տպագրված են Bauer տպագրող սարքին համապատասխան տպագրող սարքով:

Միաժամանակ կարելի է նշել, որ նախորդ ընկերության հետ պայմանագիրը ավարտվել է 2016թ. դեկտեմբերի 31-ին և մեզ չի թվում, որ այդ ընկերությունը ժամանակին ավելորդ գումարներ պետք է տրամադրեր պահեստում լրացուցիչ քանակի նույնականացման քարտեր ունենալու համար, ենթադրելով, որ հետագայում հնարավոր է դրանց անհրաժեշտությունը:

«Հ-ում առկա և գործարկվող նույնականացման քարտերը տպագրվում են 2012թ. և մինչև օրս դեռևս ծրագրային և տեխնիկական իմաստով խնդիրներ չեն առաջացել, իսկ մասնակիցների ներկայացրած գնային տարբերությունը բանակցությունների արդյունքում փոփոխվում է:

Ինչ վերաբերվում է գնման ընթացակարգը 30.12.2019թ.-ին ժամը 19:33-ին հրապարակելու հետ կապված հայտնում եմ, որ ՀՀ ոստիկանությունը կատարել է ՀՀ վարչապետի հանձնարարականը, այն է 2019 թվականին հայտարարել 2020 թվականի կարիքների համար իրականացվող բոլոր ընթացակարգերը, բացի դա այդ օրերին անգամ ՀՀ ֆինանսների նախարարությունը և գանձապետարանն աշխատում էին արտակարգ ռեժիմով, անգամ մինչև ժամը 23:59: Կարծում ենք ՀՀ ոստիկանությունը դրանով չի ունենա հարել ոչ մեկի շահերը, քանի որ մրցույթը ենթադրենք 30.12.2019 թվականին ժամը 15:00-ին հրապարակելու պարագայում ոչ մի բան չէր փոխվելու:

«Հարգելի բողոքը քննող անձ, խնդրում ենք չբավարարել մասնակցի բողոքը, քանի որ այդպես ՀՀ-ում կատարված հար կլինի նույնականացման քարտերի տրամադրման գործընթացը, բացի դա ևս մեկ անգամ մրցույթ հրապարակվելուց տեխնիկական բնութագիրը չի ենթարկվելու փոփոխությունների, քանի որ ներկայումս ՀՀ-ում գործում է 2010 թվականին հաստատված ստանդարտները:»:

Ներկայացված լրացմամբ, Պատվիրատուն հայտնել է նաև հետևյալը.

««ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի գրության կապակցությամբ տեղեկացնում եմ, որ խնդիրը կայանում է նրանում, որ հարցը կարդացող սարքը չէ, այլ նույնականացման քարտերի միկրոչիպը: Նոր սերնդի միկրոչիպով նույնականացման քարտեր պատվիրելու համար պետք է լրացուցիչ փորձարկումներ իրականացնել, անհրաժեշտության դեպքում ծրագրային փոփոխություններ:

Իրականում խնդիրը միայն պետք չէ դիտարկել կարդացող սարքերը, այլ ներկայումս շահագործվող համակարգը իր տեխնիկական միջոցներով, ինչը համալիր վերազինման կարիք ունի և այդ կապակցությամբ է հայտարարվել կենսաապահական անձնագրերի և նույնականացման քարտերի թողարկման, արդիականացված հանրային հավաստագրերի ենթակառուցվածքի ավտոմատացված համակարգի ներդրման, սպասարկման և փոխանցման մրցույթ: Նշված մրցույթը հայտարարելու նպատակով մշակվել է տեխնիկական առաջադրանք նոր ծրագրային ապահովմամբ և ժամանակակից տեխնիկական միջոցներով:

Ելնելով վերոգրյալից և լրացուցիչ ֆինանսական ծախսերից խուսափելու համար է, որ հայտարարվել է հրապարակ մրցույթ և նախատեսվել է պատվիրել ներկայումս գործող, ՀՀ կառավարության 26.08.2010թ. թիվ 33 արձանագրային որոշմամբ հաստատված, նույնականացման քարտերին նմանարիպ քարտերի խմբաքանակ:

ՀՀ ոստիկանությունը հայտնում է, որ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի կողմից իրականացվում է նույնականացման քարտերի ձեռքբերման մրցույթ, որն այժմ ընթացքի մեջ է, և ՀՀ ոստիկանության կողմից հրապարակված մրցույթը հրապարակվել է նույնականացման քարտերի համալրման նպատակով, որպեսզի մինչև «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի կողմից հրապարակվող ընթացակարգի ավարտը ՀՀ քաղաքացիներին անհրաժեշտ է ապահովել նույնականացման քարտերով:»:

4. ԳԲՔԱ-ԼՕ-2020/21 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ ոստիկանության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից նույնականացման քարտերի տպագրման աշխատանքների ձեռքբերման նպատակով 30.12.2019թ.-ին հայտարարվել է «ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՔԱՐՏ-2020/Ա-33» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ կամ Ընթացակարգ):

«ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՔԱՐՏ-2020/Ա-33» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հայտերի բացումը նշանակվել է 16.01.2020թ.-ին:

Ընթացակարգի հրավերի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 7-րդ կետով գնման առարկայի համար սահմանվել են հետևյալ տեխնիկական պայմանները.

Նույնականացման քարտը պետք է համատեղելի լինի ըստ հետևյալ ստանդարտների կամ թեստերի.

- ISO/IEC 7810 ID Card: Ֆիզիկական առանձնահատկություններ,
- ISO/IEC 7812 ID Card: Ներկառուցված պլատայով կոնտակտային քարտ,
- ISO 10373-3 մեխանիկական թեստեր: ճկում,
- ISO 10373-3 մեխանիկական թեստեր: ոլորում,

- ISO 10373-3 մեխանիկական թեստեր: խտացում,
- ISO 10373-1 կլիմայական թեստեր: ջերմաստիճան,
- ISO 10373-1 կլիմայական թեստեր: խոնավություն,
- ISO 7816-3 կլիմայական թեստեր: էլեկտրական ազդանշաններ և փոխանցման պրոտոկոլներ,

- ISO 10373-3 էլեկտրական թեստեր: ստատիկ էլեկտրաէներգիա,
- DIN EN ISO 4892-2, B այլ թեստեր: ուլտրամանուշակագույն լույս,
- ISO 9001-2001 ISO 9001 Certification for the manufacturing site of the bidder
- ISO/IEC 7816-1 Ֆիզիկական առանձնահատկություններ,
- ISO/IEC 7816 -2 Կոնտակտների ուղղություններ և գտնվելու վայր,
- ISO/IEC 7816-3 էլեկտրական ինտերֆեյս և փոխանցման պրոտոկոլներ,
- ISO/IEC 7816-4 Միջուրտային հրահանգներ՝ փոխադարձ փոխանակման համար,

- ISO/IEC 7816-5 Համարակալման համակարգ և գրանցման ընթացակարգ առաջարկ ներկայացնողների համար,

- ISO/IEC 7816-6 Միջուրտային տվյալների տարրեր՝ փոխադարձ փոխանակման համար,

- ISO/IEC 7811 Նույնականացման քարտերի գրառման տեխնիկայի նկարագրություն:

Ի պատասխան Բողոքներ քննող անձի կողմից 2020թ.-ի փետրվարի 21-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/2483-2020 գրության՝ 28.02.2020թ-ին թիվ 1188 գրությամբ «Էլեենգ» ՓԲԸ-ն հայտնել է հետևյալը.

1. Amaxtek ընկերության C290 USB մոդելի քարտ կարդացող սարքի միջոցով ISO 7816 պահանջներին համապատասխան միկրոչիպերի ընթերցումը հայտարարված է արտադրողի տեխնիկական բնութագրում, սակայն SmartMX2 կամ SmartMX3 չիպերի օգտագործումը փորձարկված չէ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի կողմից:

2. ՀՀ ոստիկանության կողմից հայտարարված «ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՔԱՐՏ-2020/Ա-33» ծածկագրով նույնականացման քարտերի տպագրման աշխատանքների կատարման վերաբերյալ մրցույթի տեխնիկական բնութագրում սահմանված միկրոչիպի ընտրությունը պայմանավորված չէ Amaxtek 290 սարքի հնարավորություններով:

3. Չիպի տեխնիկական բնութագրի պահանջը բխում է բացառապես ՀՀ ոստիկանությունում օգտագործվող համակարգի տեխնիկական հնարավորություններից: Որևէ այլ չիպի կամ տեխնոլոգիայի կիրառումը կպահանջի փորձարկումներ, համակարգի հնարավոր փոփոխություններ, ինչը կբերի լրացուցիչ ֆինանսական ծախսերի:

www.armeps.am կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել թվով 3 (երեք) մասնակիցներ:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ «Միհրան Արամի Սիմոնյան» Ֆ/Ա-ի կողմից 15.01.2020թ.-ին ներկայացված բողոքն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան

ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի

Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառույթային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Վերոգրյալ իրավանորմների համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ ոստիկանության կողմից նույնականացման քարտերի տպագրման աշխատանքների ձեռքբերման նպատակով 30.12.2019թ.-ին հայտարարված «ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՔԱՐՏ-2020/Ա-33» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հայտերի բացումը նշանակվել է 16.01.2020թ.-ին:

Ընթացակարգի հրավերի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 7-րդ կետով գնման առարկայի համար սահմանվել են հետևյալ տեխնիկական պայմանները.

Նույնականացման քարտը պետք է համատեղելի լինի ըստ հետևյալ ստադարնտների կամ թեստերի.

- ISO/IEC 7810 ID Card: Ֆիզիկական առանձնահատկություններ,
- ISO/IEC 7812 ID Card: Ներկառուցված պլատայով կոնտակտային քարտ,

- ISO 10373-3 մեխանիկական թեստեր: ճկում,
- ISO 10373-3 մեխանիկական թեստեր: ոլորում,
- ISO 10373-3 մեխանիկական թեստեր: խտացում,
- ISO 10373-1 կլիմայական թեստեր: ջերմաստիճան,
- ISO 10373-1 կլիմայական թեստեր: խոնավություն,
- ISO 7816-3 կլիմայական թեստեր: էլեկտրական ազդանշաններ և փոխանցման պրոտոկոլներ,

- ISO 10373-3 էլեկտրական թեստեր: ստատիկ էլեկտրաէներգիա,
- DIN EN ISO 4892-2, B այլ թեստեր: ուլտրամանուշակագույն լույս,
- ISO 9001-2001 ISO 9001 Certification for the manufacturing site of the bidder
- ISO/IEC 7816-1 Ֆիզիկական առանձնահատկություններ,
- ISO/IEC 7816 -2 Կոնտակտների ուղղություններ և գտնվելու վայր,
- ISO/IEC 7816-3 էլեկտրական ինտերֆեյս և փոխանցման պրոտոկոլներ,
- ISO/IEC 7816-4 Միջուրտային հրահանգներ՝ փոխադարձ փոխանակման համար,

- ISO/IEC 7816-5 Համարակալման համակարգ և գրանցման ընթացակարգ առաջարկ ներկայացնողների համար,

- ISO/IEC 7816-6 Միջուրտային տվյալների տարրեր՝ փոխադարձ փոխանակման համար,

- ISO/IEC 7811 Նույնականացման քարտերի գրառման տեխնիկայի նկարագրություն:

Ի պատասխան Բողոքներ քննող անձի կողմից 2020թ.-ի փետրվարի 21-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/2483-2020 գրության՝ 28.02.2020թ-ին թիվ 1188 գրությամբ «Էկենգ» ՓԲԸ-ն հայտնել է հետևյալը.

1. Amaxtek ընկերության C290 USB մոդելի քարտ կարդացող սարքի միջոցով ISO 7816 պահանջներին համապատասխան միկրոչիպերի ընթերցումը հայտարարված է արտադրողի տեխնիկական բնութագրում, սակայն SmartMX2 կամ SmartMX3 չիպերի օգտագործումը փորձարկված չէ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի կողմից:

2. ՀՀ ոստիկանության կողմից հայտարարված «ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՔԱՐՏ-2020/Ա-33» ծածկագրով նույնականացման քարտերի տպագրման աշխատանքների կատարման

վերաբերյալ մրցույթի տեխնիկական բնութագրում սահմանված միկրոչիպի ընտրությունը պայմանավորված չէ Amaxtek 290 սարքի հնարավորություններով:

3. Չիպի տեխնիկական բնութագրի պահանջը բխում է բացառապես ՀՀ ոստիկանությունում օգտագործվող համակարգի տեխնիկական հնարավորություններից: Որևէ այլ չիպի կամ տեխնոլոգիայի կիրառումը կպահանջի փորձարկումներ, համակարգի հնարավոր փոփոխություններ, ինչը կբերի լրացուցիչ ֆինանսական ծախսերի:

www.armeps.am կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել թվով 3 (երեք) մասնակիցներ:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջները պետք է հնարավորություն տան մասնակիցներին ճշգրիտ ընկալել գնման առարկան, ապահովեն մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերը ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի

հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ ... բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Սույն գործով Մասնակիցը, օգտվելով իրեն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի դրույթերով վերապահված բողոքարկման իրավունքից, իրացրել է այն՝ ներկայացնելով բողոք: Մասնակիցը, սակայն, Բողոքներ քննող անձին չի ներկայացրել

Պատվիրատուի կողմից Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտած լինելու փաստի վերաբերյալ վերաբերելի ապացույց: Այն, որ սահմանված տեխնիկական բնութագրում առկա չափորոշիչները խոչընդոտում են հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը: Ընդ որում, այդպիսի հնարավորություն Մասնակիցը ունեցել է, թե բողոքը ներկայացնելու պահին, և թե բողոքի քննության ընթացքում՝ մինչև որոշման կայացման պահը:

Ավելին՝ հիմք ընդունելով «Էլենգ» ՓԲԸ-ն 28.02.2020թ-ին թիվ 1188 գրությունը և այդ գրությամբ տրված մասնագիտական կարծիքը (հիմքը՝ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ կանոնադրության 7-րդ կետը), Բողոքներ քննող անձը արձանագրում է, որ չիպի տեխնիկական բնութագրի պահանջը բխել է բացառապես ՀՀ ոստիկանությունում օգտագործվող համակարգի տեխնիկական հնարավորություններից: Որևէ այլ չիպի կամ տեխնոլոգիայի կիրառումը կպահանջի փորձարկումներ, համակարգի հնարավոր փոփոխություններ, ինչը կբերի լրացուցիչ ֆինանսական ծախսերի:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Միհրան Արամի Սիմոնյան» Ֆ/Ա-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները անհիմն են, իսկ գնման ընթացակարգի պահանջները հիմնավոր են և չեն սահմանափակում հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքները: Հատկապես այն դեպքում, երբ Ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել 3 (երեք) մասնակից, որպիսի պայմաններում հերքվում են Բողոքաբերի կողմից նշված նաև հնարավոր մասնակիցների մրցակցության սահմանափակումը և գնումների մասին օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումների առկայությունը:

Ամփոփելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտում առկա չէ, ինչը կարող էր հանգեցնել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Միհրան Արամի Սիմոնյան» Ֆ/Ա-ի կողմից 15.01.2020թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/21 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝**

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ

